նի իւր չափն ու սահմանից, այն ժամանակ նա մի կատաղի առիւծ կհանդիսանայ իւր թշնամու հանդէպ. այն ժամանակ նա իւր հարազատին, նոյն իսկ իւր զաւակին անգամ չի խնայի: Նա իւր սոսկին չարաչար կպատժի և իւր սրտի ոխը կհանէ նրա հօր սերունդից՝ իւր հակառակորդներին խաղաղ բնաջինջ անելով: Ուտիացին միևնոյն ժամանակ պէտք եղած տեղը նաև բարեսիրտ է, չափազանց հիւրասէր, ընկերասէր, սրտաբաց, գործունեայ, համերաշխ և միաբան է ամեն մի բարի և հանրաշահ գործի մէջ: Վերջին ծայր նա մինչև պատուազգաց և պատուասէր է. եթէ մէկը համարձակուի նրա ընտանիքի պատիւը շօշափել, կամ նրա արբազան կրօնի, հաւատի և ազգութեան մասին անարդ մի խօսք ասել և կամ մի թեթև ծաղրածութեան ակնարկութիւն անել, այդպիսի յանդուգն անմիտը տեղն ու տեղը կպատժուի խիստ եղեռ: Ազգագրչ տասնեակից, պատմեմ մի դէպք, որ տեղի ունեցաւ իմ ներկայութեամբ, որ իմ կեանքիս մէջ երբէք չեմ մոռանայ: 1875 թ. սկսած, երբոր ես Թիֆլիզումն էի, Մինդեան և Զատկական մեծ տօներից առաջ միշտ հրաւիրում էի ինձ մօտ հիւրեր Ուտիացոց աշխարհից, յատկապէս թրքախօս և ուտիախօս իմ ազգականներից նրանց, որոնք իրենց ծագումով, դիրքով և հարստութեամբ մեծ ազդեցութիւն ունին գիւղացոց վրայ. որպէսզի անձամբ գան, տեսնեն ամեն մի նորութիւն և լաւ բան և ապա գնան իրենց հայրենի գիւղերում տեսնեն, խօսեն և ցոյց տան այն ամեն նորագոյն առարկաները, ո-